

**ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՅԲ-25/154**

ք. Մեծամոր

«10» փետրվար 2026թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է Մեծամորի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պլանները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուին չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուին ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7,680,000.00 (յոթ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուին նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուին իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձնման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ սույն ենթակետի կիրառման դեպքում գործակալ չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշմա ն 2-թդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում՝ սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն

պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:


8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական
կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝

(ստորագրություն)




ԿԱՏԱՐՈՂ

«Քրոու Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, «Դոմ Մոսկվի» բիզնես
կենտրոն, Արգիշտի փ. 7, 2-րդ հարկ
procurement@crowe.am
Ինելկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2052022188681001
ՀՎՀՀ 02618043

Տնօրեն՝

Ա. Ասատրյան



Հավելված N 1
«10» փետրվար 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/154 ծանկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության			մատուցման	
			տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը*	հասցեն	Ժամկետը*
1	79211150/502	Առողիտորական ծառայություն	տեխնիկական բնութագիրը ներկայացվում է հավելված 1.1-ով	դրամ	7,680,000.00	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 4	Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և պրոնախարհի համաձայն և պրոնախարհի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող պայմանագրի/համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

* Սույն Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և պրոնախարհի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող պայմանագրի/համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnurnermetsamor@mail.ru
ՀՀ ՖԼ գործադրական վարչություն
ՀՀ 900332239061
ՀՀ ՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝



Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Քրոու Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, «Դոմ Մոսկվի» բիզնես կենտրոն, Արգիշտի փ. 7, 2-րդ հարկ
procurement@crowe.am
Ինելկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2052022188681001
ՀՀ ՀՀ 02618043

Տնօրեն՝

Ա. Անատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. ՆԵՐՔԻՆ ԱՌՈՂԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ներքին աուղիտի ծառայությունների մատուցման նպատակով հրավիրված անձը (այսուհետ՝ Կատարող) պետք է գնահատի ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի, Մեծամորի բարեկարգում ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) ներքին աուղիտի միջավայրը՝ ֆինանսական կառավարման և հսկողության հետ կապված գործառնությունները՝ իրականացնելով «Ներքին աուղիտի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով (այսուհետ՝ N 143-Ն հրաման) սահմանված ներքին աուղիտի տեսակները, որը ներառում է՝

1) Հավաստիացման տրամադրում (համապատասխանության աուղիտ, կատարողականի աուղիտ, համապատասխանության և կատարողականի աուղիտի տեսակների համակցություն),

2) Խորհրդատվություն:

Կատարողը սույն տեխնիկական բնութագրում թվարկված իրավական ակտերին համապատասխան առաջարկների ներկայացման միջոցով պետք է օժանդակի ղեկավարությանը ձեռնարկել միջոցառումներ՝ կազմակերպության նպատակներին հասնելու և դրանում հնարավոր ռիսկերը կառավարելու համար:

Ներքին աուղիտը հանդիսանում է անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառնություն, որն ուղղված է կազմակերպության գործունեության բարելավմանը և ընդգրկում է կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր գործառնությունները և կազմակերպության գործունեության արդյունքները, այսինքն՝ կազմակերպության ներքին հսկողության ողջ համակարգը՝ ներառյալ բոլոր գործառնությունները, ռեսուրսները, ծառայությունները, գործընթացները, ծրագրերը և այլ իրավահարաբերություններից առաջացող խնդիրները, որի մատուցման նպատակով Կատարողը պետք է՝

- Իրականացնի կազմակերպության ներքին աուղիտի միջավայրի ուսումնասիրություն,
- Նկարագրի ներքին աուղիտի իրականացման ոլորտները, աուղիտի ենթակա ստորաբաժանումների մասնակցության առանձնահատկությունները, ինչպես նաև աջակցությունը,
- Կազմակերպության ղեկավարությանը պատշաճ գնահատական ներկայացնի կազմակերպության ներքին հսկողության համակարգի համապատասխանության, հուսալիության և արդյունավետության մասին,
- Գնահատի ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը՝ կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունը,
- Կազմակերպության կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման (ռիսկերի բացահայտման, գնահատման և հսկման) գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման ու դրանց բարելավման միջոցով աջակցի կազմակերպությանը վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման գործում,
- Հավաստիացնի կազմակերպության ղեկավարին (այսուհետ՝ Ղեկավար) և ներքին աուղիտի կոմիտեին, որ կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգերի ներդրումը և պահպանումը),
- Օժանդակի կազմակերպությանը լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառնությունների օգտավետությունը և արդյունավետությունը,
- Օբյեկտիվ կարծիք տրամադրի վերահսկող մարմիններին Ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ,
- Օժանդակի Ղեկավարին հասնել իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով կազմակերպության համակարգերը և ծառայությունները,
- Իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,
- Ապահովի աուղիտորենների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին,
- Ապահովի իր առնվազն մեկ աշխատակցի մշտապես ներկայությունը կազմակերպությունում, որը պատասխանատու է ներքին աուղիտի օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջների կատարման համար,
- Ապահովի «Ներքին աուղիտի մասին» օրենքով աուղիտի ստորաբաժանման, ներառյալ՝ ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը,

- Կատարի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղարի պարտականությունները, հաշվետու լինի Ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին, բացի ներքին աուդիտի գործունեության կառավարման գործառնություններից, չիրականացնի կազմակերպության կառավարման որևէ գործառնություն:
- Նախկինում կատարած աուդիտորական աշխատանքների արդյունքները պետք է ընդունվեն ի գիտություն և հաշվի առնվեն հետագա աշխատանքներում:

2. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Կատարողը պետք է գնահատի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրը, որը ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը, ընդգրկում է կազմակերպության աուդիտի բոլոր հնարավոր գործառնությունները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները: Կատարողը իր աշխատանքների կազմակերպման փուլում, նախևառաջ, պետք է հստակ սահմանի կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառնությունները և դրանց նկարագրությունները՝ (Գործառնությամբ կամ գործընթացը կազմակերպության նպատակին հասնելուն ուղղված հաջորդական և փոխկապակցված գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է):

3. ԿԱՏԱՐՈՂԻՆ և ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1.1. Ձեռքբերվող ծառայության նկարագիրը

1. Կատարողը պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկի ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված բոլոր այն գործողությունների կատարումն ապահովելով սույն տեխնիկական բնութագրով ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը 2024-2025 թվականների ժամանակահատվածի համար:

2. Կատարողը պարտավոր է՝

1) Կազմել և Ղեկավարի հաստատմանը ներկայացնել ներքին աուդիտի կանոնակարգը և դրա փոփոխությունները, որում անհրաժեշտ է սահմանել այն դրույթները, որոնք ենթակա են պարտադիր կատարման ողջ կազմակերպության համար և պետք է արտացոլեն աուդիտի իրականացման բոլոր փուլերը և այն հարցերը, որոնք նպաստում են ներքին աուդիտի աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև Միավորների կողմից իրականացվող այն գործողությունները, որոնք ենթակա են ներքին աուդիտին,

2) Իրականացնել արդյունավետ ներքին աուդիտ՝ գնահատելով ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը հետևյալ պայմաններին՝

- Կազմակերպության ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում, մասնավորապես՝ Ղեկավարի կողմից կատարված ռիսկերի գնահատման հավաստիությունը, Ղեկավարի կողմից իրականացվող ռիսկերի դիտարկումը և արդյունքների ներկայացումը, ինչպես նաև ռիսկերի և հսկողության համակարգի հետ կապված խնդիրների լուծումը, Ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվություններն այն դեպքերի վերաբերյալ, երբ ռիսկերը գերազանցել են դրանց ընդունելի միջակայքը, և այդ հաշվետվություններին կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարների արձագանքը,

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,

- Տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառնություններ,

- Տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,

- Կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,

- Առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում:

3) Տրամադրել,

- Հավաստիացում առ այն, որ կազմակերպությունում առկա կառավարչական և իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացները համապատասխանում են /չեն համապատասխանում/ մասամբ են համապատասխանում նշանակալի ռիսկերի բացահայտման և դիտարկման նպատակին,

- Հաստատում առ այն, որ ներդրված ներքին հսկողական համակարգերը գործում են / չեն գործում արդյունավետ կերպով,

- Հավաստիացում առ այն, որ ռիսկերի կառավարման հաշվետվողականության գործընթացները հուսալի են / հուսալի չեն,

- Հաստատում առ այն, որ Ղեկավարը կազմակերպության այլ պաշտոնատար անձանցից ստանում է / չի ստանում/ մասամբ է ստանում պատշաճ որակի և հուսալի տեղեկատվություն,

- Առաջարկություններ՝ ուղղված հսկողական համակարգերի և ռիսկերի կառավարման ընթացակարգերի բարելավմանը և հսկողական համակարգերում բացահայտված թերությունների շտկմանը,

- Եզրակացություն ենթակա Միավորների նկատմամբ հսկողության վերաբերյալ,
- Եզրակացություն կազմակերպության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների մակարդակով և ընդհանուր համակարգի հսկողության վերաբերյալ,
- Եզրակացություն կապալառուների կամ ծառայություն մատուցողների հսկողության համակարգերի վերաբերյալ, եթե այդ հսկողությունն էական է կազմակերպության նպատակների իրագործման համար,

4) Կազմել և Ղեկավարին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնել ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները.

- Իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքների վերաբերյալ պարբերական հաշվետվություններ, որը կներառի՝ ինչպիսի աշխատանք է կատարվել և որն է այդ աշխատանքների կատարման պատճառը, ներքին աուդիտի շրջանակներում հայտնաբերված բոլոր բացահայտումները և եզրակացությունները, կառուցողական առաջարկություններ՝ կազմակերպության գործունեությունը բարելավելու հարցում՝ Ղեկավարին օգնելու նպատակով,

- Ներքին աուդիտի գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն,
- Տարեկան առնվազն մեկ անգամ ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն, ներառյալ ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները,

5) Իրականացնել վերստուգման գործընթաց՝ աուդիտի ենթարկվող Միավորի ղեկավարության կողմից իրականացված՝ աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների շտկման գործողությունների համապատասխանությունը, արդյունավետությունը և ժամանակին լինելը գնահատելու նպատակով և պարզելու թե արդյոք աուդիտի ենթարկված Միավորի Ղեկավարը ձեռնարկել է իրավիճակը շտկող գործողություններ կամ իրագործել է ներկայացված առաջարկությունները ձեռք են բերվել ցանկալի արդյունքները, թե Ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն իրենց վրա են վերցրել առաջադրանքի արդյունքներից բխող միջոցառումների չիրականացման ռիսկերը: Վերստուգման գործողությունները պետք է պատշաճորեն փաստաթղթավորվեն:

Կատարողը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն առաջարկություններին, որոնց մասով ղեկավարությունն ստանձնել է մնացորդային ռիսկ, և պատշաճ կերպով փաստաթղթավորի այդ դեպքերը.

6) Կազմակերպել աշխատանքային փաստաթղթերի պատշաճ փաստաթղթավորում և պահպանում,

7) Կազմել ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր, ապահովել դրա կատարումը, որը Ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և այլ շահագրգիռ կողմերին կտրամադրի հիմնավորված հավաստիացում, որ ներքին աուդիտը գործում է արդյունավետ և օգտավետ, իր կանոնակարգի համաձայն, որն իր հերթին համապատասխանում է «Ներքին աուդիտի մասին» օրենքին, ստանդարտներին և վարքագծի կանոններին, ինչպես նաև ներքին աուդիտը դիտվում է որպես կազմակերպության գործառույթները բարելավող գործունեություն,

8) Ներքին աուդիտի համագործակցությունն այլ ներքին և արտաքին հավաստիացումներ տրամադրողների հետ,

- Կատարողը պետք է համագործակցի ներքին հավաստիացումներ տրամադրողների հետ՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու և գործողությունների կրկնությունը բացառելու նպատակով,

- Ղեկավարի հանձնարարությամբ Կատարողը պետք է համագործակցի հանրային հատվածի կազմակերպություններում օրենքով սահմանված կարգով հսկողություն (վերահսկողություն) իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինների և ՀՀ հաշվեքննիչ պալատի հետ՝ նրանց աջակցելու և համապատասխան տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

9) Կատարողը պետք է իրականացնի ներքին աուդիտ՝ հավաստիացման կամ խորհրդատվական ծառայությունների մատուցման միջոցով:

Հավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքն իրականացվում է համակարգային մոտեցմամբ՝ համապատասխանության աուդիտի կամ կատարողականի աուդիտի միջոցով կամ համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցությամբ:

Համապատասխանության աուդիտը կամ իրավական աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) կազմակերպության գործունեության համապատասխանությունը պարզելու համար: Այս դեպքում, շեշտը դրվում է ոչ միայն ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, այլ նաև օրենքներին, այլ իրավական ակտերին և այլ պայմաններին կազմակերպության գործունեության համապատասխանության վերաբերյալ ղեկավարությանը հավաստիացման տրամադրման վրա:

Կատարողականի աուդիտը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից: Կատարողականի աուդիտն ուսումնասիրում է ծառայության մատուցումը այս երեք հատկանիշների տեսանկյունից: Այն կարող է նաև ընդգրկել ծառայությունների համեմատումը համանման կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների հետ՝ որակի և ծախսերի տեսանկյունից: Համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցության տարատեսակներից են՝ համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ աուդիտները:

4. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

ա) Կատարողը պետք է ընդգրկված լինի Լիազոր մարմնի կողմից վարվող՝ հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում,

բ) Կատարողը՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար պետք է ներգրավի առնվազն վեց աուդիտոր, որոնք պետք է ունենան Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում, աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ, որից առնվազն մեկը՝ 5 տարվա աշխատանքային փորձ միայն ներքին աուդիտի ոլորտում, համատեղությամբ չաշխատեն ներքին և/կամ արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններում, կամ այլ կազմակերպություններում աշխատեն որպես ներքին աուդիտոր:

Վերոնշյալ աուդիտորներից առնվազն մեկը պետք է ունենա ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորման (Certified Internal Audit-CIA) վկայական կամ Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (the Association of Chartered Certified Accountants - ACCA) լիիրավ անդամի վկայական, առնվազն մեկը պետք է ունենա գնումների համակարգողի որակավորման աստիճան, առնվազն մեկն էլ՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման օրենսդրության իմացությամբ և հանրային հատվածի հաշվապահի որակավորման վկայական:

գ) Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմելուց և անհրաժեշտ մարդկային ռեսուրսները հաշվարկելուց հետո՝ Կատարողն, անհրաժեշտության դեպքում, կարող է ներգրավել բ) կետում նշված չափանիշներին համապատասխանող լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ՝ համաձայնեցնելով Պատվիրատուի հետ: Նշվածի համար կատարողը պետք է ունենա ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված բ) կետում նշված չափանիշներին համապատասխանող, բավարար քանակությամբ մարդկային ռեսուրսներ՝ հանրային հատվածի կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի տարրերի ռիսկերի գնահատման արդյունքներով կազմված ռազմավարական և տարեկան ծրագրերը պատշաճ կերպով իրականացնելու համար:

Կատարողը ներքին աուդիտի աշխատանքները պետք է կատարի ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան և պահպանի ներքին աուդիտորի վարքագծի կանոնները:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2026 թվականի մայիսի 29-ը:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Պայմանագրի կատարումն ընդունելու նպատակով յուրաքանչյուր հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Կատարողը ներկայացնում է հաշվետվություն հաշվետու ժամանակահատվածում մատուցված ծառայության մասին՝ նշելով ծառայություն մատուցողի անունը, ծառայության բնույթը, բովանդակությունը և դրա փաստաթղթավորված արդյունքը:

Պատվիրատուի կողմից հաշվետվությունը քննարկվում և հաստատվում կամ առարկություններով կատարողին վերադարձվում է այն ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվությունը հաստատվում է կազմակերպության ղեկավարի որոշմամբ, որի հիման վրա այն կայացվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը հաստատում է հանձնման-ընդունման արձանագրությունը:

Մատուցված ծառայության դիմաց վճարումներն իրականացվում են յուրաքանչյուր անգամ ներկայացված հաշվետվությունը հաստատվելու դեպքում՝ պայմանագրով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված ամսին:

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակում հաշվետու ժամանակահատված է համարվում 2024-2025 թվականներն ընդգրկող ժամանակահատվածը:

7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար ընտրված մասնակիցը ներկայացնում է համապատասխան գործատուի կողմից ստորագրված երաշխավորության մասին ստորագրված գրավոր հավաստիացում և հայտարարություն՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին:

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ:

8. «ՄԱՍՆԱԿԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ.

ա) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում համայնքապետարաններում աուդիտի ծառայությունների մատուցված լինելը:

բ) սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենը, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (համաձայնագրի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

9. «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋ.

ա. Հայաստանի Հանրապետության ղեզդիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ղեզդիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

10. ԱՅԼ ՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1 Ներքին աուդիտի իրականացման հետ կապված բոլոր ծախսերը (գործուղում և այլն) ներառվում են ծառայության պայմանագրային գնի մեջ:

10.2 Ներքին աուդիտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ թվում հետևյալ իրավական ակտերով.

- I. «Ներքին աուդիտի մասին» օրենք.
- II. ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշում.
- III. ՀՀ ֆինանսների նախարարի 08.12.2011թ. N 974-Ն հրաման.
- IV. ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրաման.
- V. ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012թ. N 165-Ն հրաման.
- VI. ՀՀ կառավարության 31.05.2012թ. N 732-Ն որոշում.
- VII. ՀՀ ֆինանսների նախարարի 30.11.2012թ. N 1050-Ն հրաման.
- VIII. ՀՀ ֆինանսների նախարարի 12.12.2012թ. N 1096-Ն հրաման.
- IX. ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշում.
- X. ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշում.
- XI. ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014թ. N 541-Ն հրաման:

ԱՌԻԴԻՏԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ


N	Միավորի անվանումը
1	Մեծամորի համայնքապետարան
1.1	Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին
1.2	Եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին
1.3	Քաղաքաշինության և հողաշինության բաժին
1.4	Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժին

1.5	Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին
1.6	Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին
1.7	Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին
1.8	Քարտուղարության, անձնակազմի կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
1.9	Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին
1.10	Իրավաբանական բաժին
2	Մեծամորի բարեկարգում ՀՈԱԿ
3	Մեծամորի առողջապահություն ՀՈԱԿ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական
 կենտրոն 4
 gnumnermetsamor@mail.ru
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900332239061
 ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝



Է. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Է.Ս.

ԿԱՏԱՐՈՂ

«Քրոու Արմենիա» ՍՊԸ
 ՀՀ, ք. Երևան, «Դոմ Մոսկվի» բիզնես
 կենտրոն, Արգիշտի փ. 7, 2-րդ հարկ
 procurement@crowe.am
 Ինտերբանկ ՓԲԸ
 ՀՀ 2052022188681001
 ՀՎՀՀ 02618043

Տնօրեն՝



Մ. Ասատրյան

(ստորագրություն)

Է.Ս.

Crowe Armenia LLC

Հավելված N 2
«10» փետրվարի 2026թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Սույն գնման ընթացակարգի շրջանակներում Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսվող չափաքաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20__թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
			...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
1	79211150/502	Առողիտորական ծառայություն	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
Հ/ՀՀՀ 04440608

ԿԱՏԱՐՈՂ

«Քրոու Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, «Դոմ Մոսկվի» քիզեն կենտրոն, Արգիշտի փ. 7, 2-րդ հարկ
procurement@crowe.am
Ինտերնետական ՓԲԸ
ՀՀ 2052022188681001
Հ/ՀՀՀ 02618043

Համայնքի ղեկավար՝


Է. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.



Տնօրեն՝



Հավելված 3
« _____ » 20 թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-9ՀԾՁԲ-25/154 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
 Պայմանագրի համարը՝ _____
 Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « »
 « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը
 հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների								
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակ ացույցի/	
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի			

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) մինչև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի

համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Հավելված N 4
«_____» 20 թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-25/154 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈԻՑՈՒՄ

- _____ ֆինանսական գործակալի անվանումը _____ հայտնում է, որ.
1. _____ պատվիրատուի անվանումը _____-ի և _____ կատարողի անվանումը _____-ի միջև «----»
_____ 20 թ. կնքված «-----/-----» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝
Պայմանագիր) շրջանակում իր և _____ կատարողի անվանումը _____-ի միջև «----» _____ 20 թ-ին
կնքվել է «-----» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.